ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2021թ.

Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/309

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի 15.11.2021թ. թիվ 01/61-28210 գրության հիման վրա «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին և Սարգիս Պողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության 22.11.2021թ. թիվ 26/26-1/19006-2021 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ին և Սարգիս Պողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/309 ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացույցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել 23.12.2021թ. ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**